ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Վարչական գործ թիվ **ՎԴ/6966/05/26**
2026թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 19-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Ակտիվ լեռնագործ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.06.2026 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ընկերության ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ օրենքի ուժով ընդունված՝ թիվ ԼՎ-425 լեռնահատկացման ակտում փոփոխություն կատարելու՝ լցակույտի տեղադիրքը և դրա կոորդինատները նախատեսելու վերաբերյալ վարչական ակտը Ընկերությանը տրամադրելուն Նախարարությանը պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Նախարարությանը Ընկերությանը տրամադրել օրենքի ուժով ընդունված՝ թիվ ԼՎ-425 լեռնահատկացման ակտում փոփոխություն կատարելու՝ լցակույտի տեղադիրքը և դրա կոորդինատները նախատեսելու վերաբերյալ վարչական ակտը։

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դիլբարյան) (այսուհետ՝ Դատարան) 11.05.2026 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է։

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.06.2026 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.05.2026 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ։

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Անի Սողոմոնյան)։

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել։

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-68-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ, 47-րդ, 48-րդ և 62-րդ հոդվածները։

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը չի պարզել, թե արդյո՞ք առկա եղել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 47-րդ հոդվածով նախատեսված հիմքերը, քանի անգամ և ինչ ժամկետով է երկարաձգվել վարույթը, արդյո՞ք պահպանվել են օրենքով սահմանված առավելագույն ժամկետները։

Նախարարությունը թույլ է տվել լիազորությունների չարաշահում և վարչական վարույթը միևնույն հիմքով 30-օրյա ժամկետով երկարաձգել է բազմիցս։ Մասնավորապես՝ 05.02.2025 թվականի թիվ 186-Ա, 17.03.2025 թվականի թիվ 489-Ա, 27.03.2025 թվականի թիվ 564-Ա, 10.09.2025 թվականի թիվ 2189-Ա, 10.11.2025 թվականի թիվ 3089-Ա, 10.12.2025 թվականի թիվ 3420-Ա, 09.01.2026 թվականի թիվ 25-Ա հրամաններով վարչական վարույթը երկարաձգվել է յուրաքանչյուր անգամ 30-օրյա ժամկետով։

Բացի այդ, սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը չի համապատասխանում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումներին, քանի որ Դատարանը, սահմանափակվելով միայն վարչական վարույթի ժամկետի երկարաձգման փաստի արձանագրմամբ, չի իրականացրել այդ երկարաձգումների իրավաչափության ամբողջական գնահատում և դրանց՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածների պահանջներին համապատասխանության ստուգում։

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը չի տարբերակել վարչական վարույթի ժամկետի օրինական երկարաձգման պայմաններում վարչական մարմնի կողմից ակտ ընդունելու իրավասության հնարավորությունը և այն դեպքերը, երբ օրենքով սահմանված պայմանների սպառման արդյունքում առաջանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիան։

Նման պայմաններում միայն երկարաձգման մասին որոշումների առկայության փաստին Դատարանի կողմից արված հղումը չի կարող բավարար համարվել վարչական վարույթի ժամկետների պահպանված լինելու և պատշաճ հայցատեսակի ընտրության վերաբերյալ վերջնական հետևություն կատարելու համար, ուստի Վերաքննիչ դատարանը չէր կարող առանց գործի ըստ էության քննության բացառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կիրառելիությունը և եզրակացնել, որ տվյալ դեպքում առկա է միայն պարտավորեցման հայց ներկայացնելու հնարավորություն։

Վերոնշյալ դիրքորոշմամբ Դատարանը և Վերաքննիչ դատարանը հայցադիմումի ընդունելիության փուլում փաստացի վերջնական գնահատական են տվել այն հարցին, թե արդյոք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիան առաջացել է, թե՝ ոչ, ինչի հետևանքով սահմանափակել են հայցվորի՝ դատական պաշտպանության իրավունքը։ Մինչդեռ այդ հարցի լուծումը պայմանավորված էր վարչական վարույթի ժամկետի երկարաձգումների իրավաչափության գնահատմամբ, ինչը պահանջում էր գործի նյութերի, երկարաձգման հրամանների հիմքերի, դրանց փաստական անհրաժեշտության, ծանուցումների և փոխօգնության իրական ընթացքի հետազոտում։ Այդպիսի հարցը չէր կարող լուծվել հայցադիմումը վերադարձնելու փուլում առանց գործն ըստ էության քննելու։

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 19.06.2026 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ։

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով։

Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ *դատարանի մատչելիության իրավունքին՝ հաշվի առնելով, մասնավորապես, նշված իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող հետևյալ չափանիշները.*

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման արդարացում,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմանները, այդ թվում՝ բողոքարկման ժամկետները, չպետք է գերակայեն կամ խոչընդոտեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները *(նշված չափանիշները, մասնավորապես, տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 12.07.2019 թվականի ՍԴՈ-1293 որոշման մեջ):*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրույթները, երաշխավորելով անձի՝ իր իրավունքների և ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատական պաշտպանության իրավունքները, սահմանում են անձի դատարան դիմելու իրավունքը, որը կոչված է ստեղծելու պայմաններ՝ անձի խախտված իրավունքները վերականգնելու համար: Դատարան դիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է իր՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարան դիմելու իրավունքը: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ *(տե՛ս, Կարինե*

Ջլավյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին դատարանի մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով *(տե՛ս, Ashingdane v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57):*

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը *(տե՛ս, Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28):*

Դատական պաշտպանության իրավունքի իրականացումը հիմնված է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները, անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել դատարան, իրականացնել, թե չիրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով իր պահանջների առարկան՝ ծավալը, հիմքը և այլն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական

դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության։

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները։

Վարչական դատավարությունում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի մասնավոր դրսևորումներից մեկն այն է, որ վարչական դատարանը պարտավոր է նախ և առաջ ապահովել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքը, որը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատարան ներկայացված հայցադիմումը, համաձայն նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի

կանոնակարգումների, ի թիվս այլնի, բովանդակում է նաև այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը, հայցվորի պահանջը հիմնավորող փաստարկները:

Վերոգրյալ իրավական կարգավորումը հնարավորություն է տալիս դատարանին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելու փուլում նախնական պատկերացում կազմել ինչպես հայց ներկայացրած անձի իրավունքների և օրինական շահերի հնարավոր խախտման մասին, այնպես էլ այդ իրավունքները վերականգնելու համար ընտրված դատական պաշտպանության եղանակի արդյունավետ լինելու մասին, մասնավորապես՝ պարզել, թե արդյոք հայցվորի կողմից ընտրված հայցատեսակը կարող է հանդիսանալ վերջինիս ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու համար պատշաճ հայցատեսակ: Այլ կերպ ասած, հայցվորի պահանջի հիմքում ընկած փաստերը, հայցվորի պահանջը հիմնավորող փաստարկները հայցադիմումում շարադրելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված պարտադիր կանոնը հայցվորի կողմից պահպանելու դեպքում միայն դատարանը կարող է հետևություն անել այն մասին, որ ընտրվել է պատշաճ հայցատեսակ, որի միջոցով տվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր կլինի գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը *(տե՛ս, Մխիթար Խուրշուդյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ ՎԴ/0324/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.10.2025 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ վարչական դատավարությունում հայցվորը չի կրում հայցադիմումում հայցի իրավական հիմքերը մատնանշելու օրենսդրական պարտականություն: Օրենսդիրը հայցվորի համար սահմանել է պարտականություն՝ հայցադիմումում մատնանշել միայն իր պահանջը և այն հիմնավորող փաստարկները: Մյուս կողմից, վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների և անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ դարձնելու և վերջիններիս նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները հնարավորինս մեղմելու նպատակով օրենսդիրը վարչական դատարանին օժտել է ակտիվ դերակատարությամբ: Ըստ այդմ, վարչական դատարանը պարտավոր է ինքնուրույն որոշել վեճի լուծման համար կիրառելի ենթակա իրավական նորմերը, ապա ձեռնարկել համարժեք միջոցներ՝ գործն ի պաշտոնե քննելու համար: Նշված եզրահանգումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի կարգավորումից, որով սահմանվում է, որ վարչական դատարանը նախնական դատական նիստում պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա իրավական ակտերի շրջանակը *(տե՛ս, անհատ ձեռնարկատեր Գևորգ Դավթյանն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ անձն իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է վարչական դատարան, ապա վերջինիս իրավունքների և

շահերի դատական պաշտպանությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հիման վրա հարուցված վարչական գործի ըստ էության քննության և լուծման միջոցով: Այսինքն՝ վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցատեսակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով տվյալ վիճելի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր է գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները:

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպող վերը նկարագրված դեպքերում հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի իրացումն ապահովվում է դատարանի կողմից գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքի կենսագործման միջոցով, որը վարչական արդարադատությանը բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկն է *(տե՛ս, Ռազմիկ Խոջումյանի իրավահաջորդ Արթուր Խոջումյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3331/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.06.2024 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով վարչական արդարադատությանը բնորոշ սկզբունքի՝ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի, բովանդակությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այդ սկզբունքի իրավական բաղադրիչ է հանդիսանում դատարանի մատնանշման պարտականությունը: ՀՀ վճռռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը սպառիչ կերպով սահմանում է այն կոնկրետ դատավարական գործողությունները, որոնք դատարանը պարտավոր է կատարել մատնանշման պարտականության շրջանակներում: Այն է.

- մատնանշել հայցադիմումում առկա ձևական սխալները,
- առաջարկել ճշտել ոչ հստակ հայցային պահանջները,
- **առաջարկել ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով,**
- առաջարկել տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները,
- առաջարկել համալրել ոչ բավարար փաստական տվյալները,
- պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները *(տե՛ս, Եվա Ղազարյանն ընդդեմ ՀՀ նոտարական պալատի նոտար Աստղիկ Մազմանյանի թիվ ՎԴ/6010/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.08.2024 թվականի որոշումը):*

Ճիշտ հայցատեսակը մատնանշելու դատարանի պարտականությանը, այդ պարտականության կատարմանը ներկայացվող պահանջներին, ինչպես նաև ոչ ճիշտ հայցատեսակով հայցապահանջը ձևակերպելու իրավական հետևանքներին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում:

Մասնավորապես, անդրադառնալով վարչական դատավարությունում հայցատեսակների առկայությանը և դրա նպատակին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական հայցի տեսակները և դրանց օրենսդրական բնորոշումները չեն կարող խոչընդոտել անձանց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը: Վարչական հայցի տեսակների գոյության նպատակն այն է, որ հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերն արդյունավետ կերպով քննության առնվեն վարչական դատարանի կողմից՝ հաշվի առնելով միայն տվյալ հայցատեսակին բնորոշ առանձնահատուկ հատկանիշները: Այլ կերպ ասած՝ վարչական հայցի տեսակներն ուղղված են անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովմանը: Վարչական հայցի տեսակների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված բնորոշումները չեն կարող մեկնաբանվել կամ կիրառվել որպես գործիք՝ անձին դատական պաշտպանություն փաստացի չտրամադրելու և վարչական արդարադատությունից հրաժարվելու համար *(տե՛ս, Գագիկ Սիմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/8117/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.09.2019 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատարանին ընդդատյա՝ հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի լուծումը ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է հայցային և հատուկ վարույթի կարգով, ընդ որում, հայցային վարույթի կարգով վեճերի լուծումն օրենսդիրը սահմանափակել է չորս հայցատեսակներով: ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հայցատեսակները սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված դատավարական գործուն կառուցակարգեր են, որոնք ելակետային նշանակություն ունեն անձի խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցատեսակի ընտրությունը պայմանավորված է անձի խախտված սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության եղանակով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ վարչական դատարանում գործի քննության և լուծման կարգն ըստ էության պայմանավորված է անձի կողմից ընտրված հայցատեսակով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հայցի տեսակներով է պայմանավորում հայց ներկայացնելու ժամկետները, ապացուցման բեռը, հայցի ապահովման միջոցները, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերի շրջանակը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության բնույթը, դատական պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը, ինչպես նաև տվյալ իրավունքի վերականգնման հնարավոր եղանակի առանձնահատկությունները, դատարանը կարող է որոշել, թե որ հայցատեսակին բնորոշ կանոնների կիրառումը կարող է առավելագույնս

արդյունավետորեն ապահովել անձի խախտված իրավունքների վերականգնումը՝ ապահովելով դատարանի մատչելիության իրավունքը, մասնագիտացված արդարադատության նպատակայնությունը և սուբյեկտիվ իրավունքների ճիշտ պաշտպանության համար անհրաժեշտ և բավարար իրավական գործիքակազմը *(տե՛ս, Շուշանիկ Վարդանյանը, Թորոս Վարդանյանը և Արարատ Խառատյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/10875/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.10.2022 թվականի որոշումը)*:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս շեշտադրել է, որ որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու վարչական դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի էությունից բխող պարտականությունը վարչական դատավարությունում կարող է իրականացվել թե՛ գործի հարուցման, թե՛ գործը դատաքննության նախապատրաստելու, թե՛ դատաքննության փուլերի ընթացքում: Այլ կերպ ասած, եթե գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող այս կամ այն դատավարական գործողությունը գործի քննության սկզբնական (գործի հարուցման կամ հայցադիմումի ընդունելիության) փուլում կատարելու համար առկա են բավարար իրավական և փաստական հիմքեր, ապա վարչական դատարանը պարտավոր է տվյալ դատավարական պարտականությունը կատարել հենց այդ փուլում՝ ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից: Ըստ այդմ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատարանի կողմից ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու պարտականությունը կարող է կատարվել նաև գործի հարուցման փուլում: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում նշված դատավարական գործողությունը պետք է կատարվի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման շրջանակներում (*տե՛ս, Վարուժան Ավետիքյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում պատշաճ հարցատեսակի ընտրության առանձնահատկությանը՝ պայմանավորված վարչական վարույթի ժամկետի երկարաձգումների պայմաններում միջամտող վարչական ակտ ընդունված լինելու հանգամանքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ պարտավորեցման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանվել է պարտադիր պահանջ, համաձայն որի՝ դատարան դիմելու համար անհրաժեշտ է վեճի առկայություն, որը կարող է լինել այն դեպքում, երբ անձը համապատասխան պահանջով դիմել է վարչական մարմնին: Այսինքն՝ պարտավորեցման հայցը ՀՀ վարչական դատարան ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է, որ անձը համապատասխան ակնկալվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջով դիմած լինի համապատասխան վարչական մարմնին *(տե՛ս, Նազելի Նահատակյանը և Գրիշա Չաումյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/4571/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2019 թվականի որոշումը):*

Անդրադառնալով պարտավորեցման հայցի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է: Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե վարչական դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը: Այլ կերպ՝ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի իրավաչափությունը պարտավորեցման հայցի շրջանակներում չի քննվում վիճարկման հայցի քննության համար սահմանված կարգով, և ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը հաստատվելն ինքնին հանգեցնում է վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի անվավերության *(տե՛ս, Կարեն Սարդարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայց ներկայացրած անձի իրավունքների և շահերի արդյունավետ դատական պաշտպանության ապահովումը և վերջինիս ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնումը պարտավորեցման հայցի միջոցով գործնականում իրացնելու համար դատարանը պետք է պարզի ոչ միայն այն հանգամանքը, թե հայցվորը համապատասխան պահանջով արդյո՞ք դիմել է վարչական մարմնին և վերջինս մերժել է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը, այլ այն հանգամանքը, որ հայցվորի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը եզրափակվել է, այսինքն՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելու մասին հայցվորի պահանջը մերժելու մասին միջամտող վարչական ակտն ընդունվել է օրենքով սահմանված ժամկետում:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերոգրյալ իրավական դիրքորոշումը հիմնավորվել է ներքոշարադրյալով.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի *(տե՛ս, Մխիթար Խուրշուդյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ ՎԴ/0324/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.10.2025 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկում անդրադառնալով վերոգրյալ իրավանորմի բովանդակությանը, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ քննարկվող իրավաբանական ֆիկցիայի նպատակն է ապահովել վարչարարության իրականացումը ողջամիտ ժամկետում, բարձրացնել վարչական մարմինների պատասխանատվությունը և բացառել այնպիսի դեպքերը, երբ իրավասու վարչական մարմինը, խախտելով օրենքով իր վրա դրված պարտականությունները, սահմանված ժամկետում չի քննարկում անձի դիմումը և դրա վերաբերյալ որևէ վարչական ակտ չի ընդունում *(տե՛ս, Գարեգին Խաչատրյանն ընդդեմ Երևան համայնքի թիվ ՎԴ/9652/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2021 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրվել է այն դատավարական կառուցակարգը, որի միջոցով անձը կարող է Օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիայի կիրառմամբ իրականացնել իր դատական պաշտպանությունն այն դեպքում, երբ վարչական մարմինն օրենքով սահմանված ընդհանուր կամ հատուկ ժամկետում վարչական ակտ չի ընդունել: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը» (տե՛ս, Հուսիկ Միլիտոսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/6308/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.06.2025 թվականի որոշումը)*:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով և ժամկետում անձի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում, ապա հայցվող բարենպաստ վարչական ակտը de jure համարվում է ընդունված, ինչը նշանակում է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը համարվում է եզրափակված, որից հետո վարչական մարմինն այլևս իրավասու չէ նույն դիմումի առնչությամբ կայացնել որևէ որոշում՝ քանի դեռ ֆիկտիվ

վարչական ակտի իրավաչափության հարց օրենքով սահմանված կարգով չի բարձրացվել և դրան լուծում չի տրվել: Ըստ այդմ՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելու մասին հայցվորի պահանջը մերժելու մասին միջամտող վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում ընդունված լինելու փաստի բացակայությունն ինքնին բացառում է պարտավորեցման հայց ներկայացնելու իրավական հնարավորությունը, քանի որ բացակայում է պարտավորեցման հայց ներկայացնելու պարտադիր նախապայմաններից մեկը՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին վարչական ակտը:

Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո ընդունված հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին վարչական ակտը չի կարող հիմք հանդիսանալ պարտավորեցման հայցի քննության համար, քանի որ վարչական վարույթի առավելագույն ժամկետը լրանալուց հետո վարչական մարմինն այլևս իրավասու չէ տվյալ դիմումի առնչությամբ ընդունել վարչական ակտ:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտավորեցման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու դատավարական սկզբունքից բխող՝ գործի լուծման համար անհրաժեշտ փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն ուղղված համարժեք միջոցներ ձեռնարկելու արդյունքում պարզելով, որ վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով և ժամկետում անձի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացրել, դատարանը պարտավոր է մատնանշման միջոցով առաջարկել հայցվորին ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինելու պատշաճ հայցատեսակով, որպիսին, նշված փաստական հանգամանքերի հաշվառմամբ կարող է հանդիսանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայցը *(տե՛ս, Մխիթար Խուրշուդյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0324/05/23 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.10.2025 թվականի որոշումը):*

Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վարչական վարույթի ժամկետի երկարաձգումների պայմաններում անձի դիմումը մերժելու իրավական հետևանքներին:

Այսպես. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ արդարացի վարչարարության պահանջը տարածվում է վարչական մարմինների գործունեության բոլոր կողմերի վրա, այն ունի համընդգրկուն բնույթ, պատշաճ վարչարարության իրավունքի մյուս բոլոր բաղադրատարրերի հիմքն է և առաջին հերթին ենթադրում է, որ վարչական մարմինների կողմից իրականացրած վարչական վարույթը՝ որպես ամբողջական ընթացակարգ, պետք է համապատասխանի վարչարարության հիմնարար սկզբունքներին, կոնկրետ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա օրենսդրական (նյութահրավական և ընթացակարգային) պահանջներին: Պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակության մեջ ընդգրկվում է նաև վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի՝ ողջամիտ ժամկետում քննության իրավունքը: Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը՝ որպես իրավական երաշխիք, նպատակաուղղված է պաշտպանելու վարչական վարույթի մասնակիցներին ընթացակարգային անհարկի ձգձգումներից և գործում է վարչական վարույթի հարուցման պահից մինչև գործի վերջնական լուծումը *(տե՛ս, «ԱՆԻ» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ ՎԴ5/0163/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2022 թվականի որոշումը):*

Օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: **Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:**

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել, եթե՝

ա) գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք, նույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել.

բ) փորձագիտական եզրակացություն տալու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը.

գ) փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը.

դ) վարչական ակտի ընդունմանը մասնակցում են մի քանի վարչական մարմիններ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 օր ժամկետով: **Այդ դեպքում թույլատրվում է մինչև երկու անգամ երկարաձգում՝ հիշյալ ժամկետի պահպանմամբ:**

Նույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել **մինչև համապատասխան փորձագիտական եզրակացությունն ստանալը:**

Նույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **եթե վարչական վարույթի ժամկետի երկարաձգման համար առաջացել են նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկից ավելի հիմքեր, ապա վարչական մարմինը կիրառում է դրանցից միայն մեկը, որն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում վարույթն արագ և արդյունավետ իրականացնելու և ըստ էության որոշում ընդունելու համար:**

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ վարույթն իրականացնող վարչական մարմինն ընդունում է որոշում, որի մասին սահմանված կարգով պետք է ծանուցի վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև վարույթին մասնակցող այլ անձանց:**

Վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է, որը բաղկացած է վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից և եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ: Օրենսդիրը հստակ սահմանել է վարչական վարույթի առավելագույն ժամկետ՝ 30 օր տևողությամբ, սակայն օրենքով կարող են սահմանվել 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ: Միաժամանակ օրենսդիրը սպառիչ թվարկել է վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու հիմքերը և երկարաձգման առավելագույն ժամկետները: Մասնավորապես՝

- եթե գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել, ապա վարչական վարույթի ժամկետը **կարող է երկարաձգվել մինչև 10 օր ժամկետով: Այդ դեպքում թույլատրվում է մինչև երկու անգամ երկարաձգում՝ հիշյալ ժամկետի պահպանմամբ,**

- եթե փորձագիտական եզրակացություն տալու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը, ապա վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև համապատասխան փորձագիտական եզրակացությունն ստանալը,

- եթե փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը, ապա վարչական վարույթի ժամկետը **կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով,**

- եթե վարչական ակտի ընդունմանը մասնակցում են մի քանի վարչական մարմիններ, ապա վարչական վարույթի ժամկետը **կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:**

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում, այսինքն՝ **30-օրյա կամ օրենքով սահմանված ավելի կարճ կամ երկար ժամկետն առավելագույնն է, որի ընթացքում վարչական մարմինը պետք է ընդունի համապատասխան վարչական ակտը**: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ վարչական վարույթը կարող է երկարաձգվել բացառապես վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան որոշման ընդունմամբ, որի մասին ծանուցվում են վարույթի մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև վարույթին մասնակցող այլ անձինք: Այսինքն վարույթն իրականացնող մարմնի կողմից վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու միակ իրավական հիմքը վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշումն է, որի բացակայության պայմաններում վարույթի ժամկետների երկարաձգումը չի կարող համարվել իրավաչափ *(տե՛ս, «ԱՆԻ» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ ՎԴ5/0163/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2022 թվականի որոշումը):*

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը և այն դիտարկելով պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակության մեջ ընդգրկված ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու հիմքերի առկայության դեպքում այդ ժամկետների երկարաձգման առավելագույն ժամանակահատվածը, առանց նախատեսելու սահմանված առավելագույն ժամկետներից շեղվելու որևէ դեպք: Հետևաբար, վարչական մարմինը, պարտավորված լինելով իրականացնելու գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, միաժամանակ սահմանափակված է իր գործողությունները կազմակերպելու օրենքով սահմանված խիստ որոշակի ժամկետներում: Նշված ժամկետների պահպանմամբ գործի հանգուցալուծման դեպքում է միայն հնարավոր ապահովել ողջամիտ ժամկետում անձին վերաբերող գործի քննության սկզբունքի իրագործումը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննության առավելագույն ժամկետներ նախատեսելն ինքնանպատակ չէ, այն, ըստ էության, երաշխիք է առավելագույն սեղմ ժամկետում գործի քննությունն իրականացնելու և վարչական վարույթը եզրափակելու համար: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու հիմքերի առկայության դեպքում վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին որոշումը վարչական մարմինն իրավասու է կայացնելու բացառապես օրենքով սահմանված՝ երկարաձգման առավելագույն ժամկետների պահպանմամբ և դրանց սահմաններում: Մասնավորապես՝ վարչական մարմինը կաշկանդված է վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու առավելագույն ժամկետներով՝ պայմանավորված այն հանգամանքով, թե Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա»-«դ» կետերով

նախատեսված կոնկրետ որ հիմքով է վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությունն առաջացել:

Այսպես.

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված հիմքի առկայության պարագայում վարչական մարմինն իրավասու է վարչական վարույթի ժամկետը **երկարաձգել մինչև 10 օր ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչև երկու անգամ՝ յուրաքանչյուր դեպքում պահպանելով 10 օրյա ժամկետը,**

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված հիմքի առկայության պարագայում վարչական մարմինն իրավասու է վարչական վարույթի ժամկետը երկարաձգել, ըստ էության, մեկ անգամ՝ **մինչև համապատասխան փորձագիտական եզրակացությունն ստանալը,**

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված հիմքի առկայության պարագայում վարչական մարմինն իրավասու է վարչական վարույթի ժամկետը երկարաձգել, ըստ էության, մեկ անգամ՝ մինչև **30 օր ժամկետով,**

Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված հիմքի առկայության պարագայում վարչական մարմինն իրավասու է վարչական վարույթի ժամկետը երկարաձգել, ըստ էության, մեկ անգամ՝ մինչև **30 օր ժամկետով:**

Այսինքն՝ օրենսդիրը հստակ և իմպերատիվ սահմանել է վարչական վարույթի ժամկետները երկարաձգելու առավելագույն ժամկետներ, որոնք լրանալուց հետո վարչական մարմինն այլևս իրավասու չէ կայացնելու վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին որոշում և պարտավոր է եզրափակել վարչական վարույթը:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերը վկայակոչված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներում բազմիցս նշել է, որ օրենքով սահմանված ժամկետում գործի քննություն չիրականացնելու իրավական հետևանքն իրավաբանական ֆիկցիայի գործողության առաջացումն է:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված կանոնը հավասարապես վերաբերում է օրենքով սահմանված առավելագույն ժամկետներով վարչական վարույթի ժամկետը երկարաձգելիս այդ ժամկետների խախտման դեպքերին ևս: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ անձը դիմում է վարչական մարմին՝ հայցելով բարենպաստ վարչական ակտի ընդունում, իսկ վարչական մարմինն օրենքով սահմանված վարչական վարույթի առավելագույն ժամկետում վարչական ակտ չի ընդունում՝ վարչական վարույթի ժամկետները երկարաձգելով վարչական վարույթի առավելագույն ժամկետի խախտմամբ, ապա անձը հնարավորություն է ստանում ձեռք բերելու օրենքով սահմանված՝ վարչական վարույթի երկարաձգման առավելագույն ժամկետի ավարտով պայմանավորված, այդ հիմքով ընդունված ֆիկտիվ վարչական ակտը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հակառակ մոտեցումը կնպաստի վարչական մարմինների կողմից օրենքով իրենց տրամադրված՝ վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու լիազորության չարաշահմանը, որպիսի դեպքերում վարչական վարույթի ժամկետները կերկարաձգվեն անորոշ ժամանակահատվածով, և որոշակի փուլում անձի իրավունքների իրացումը կդառնա անհնարին կամ ժամանակավրեպ:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վարչական վարույթի ժամկետի երկարաձգման որոշումների առկայության դեպքում, երբ հայցվորը հայցադիմումով բարձրացնում է այդ երկարաձգումների իրավաչափության հարցը՝ պայմանավորված վարչական վարույթի ժամկետները երկարաձգելու մասին հրամանները վարչական վարույթի առավելագույն ժամկետի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքով, ՀՀ վարչական դատարանը, հայցվորի կողմից ընտրված հայցատեսակի պատշաճ լինելու մասին եզրահանգում կատարելու համար, պարտավոր է նախ՝ ստուգել վարչական վարույթի ժամկետների երկարաձգման որոշումներում առավելագույն ժամկետների պահպանված լինելը, որից հետո միայն որոշել հայցատեսակի պատշաճ լինելու կամ դրա ոչ պատշաճ և փոփոխման ենթակա լինելու հարցը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում վերոգրյալ հարցերին անդրադառնալու և հայցվորի կողմից ընտրված հայցատեսակի ոչ ճիշտ լինելու մասին եզրահանգում կատարելու անհնարինության դեպքում այդ հարցերի պարզմանը ՀՀ վարչական դատարանը պարտավոր է ձեռնամուխ լինել հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործի արդյունավետ քննությունն իրականացնելուն ուղղված գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում կատարվող գործողությունների ժամանակ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ճիշտ հայցատեսակի մատնանշում բովանդակող՝ հայցադիմումը վերադարձնելու որոշման որոշակիության և կանխատեսելիության անհրաժեշտ որակներին, արձանագրել է, որ ոչ ճիշտ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ մատնանշում կատարելու ՀՀ վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարումը, ի թիվս այլնի, պետք է ենթարկվի հետևյալ պահանջներին.

- հայցադիմումի ընդունելիության փուլում ճիշտ հայցատեսակի մատնանշումը պետք է կատարվի այդ պարտականությունը կատարելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերի բավարար համակցության առկայության դեպքում միայն: Եթե հայցադիմումում ներկայացված փաստերը և հայցադիմումին կից ապացույցները բավարար հիմք չեն ձևավորում ճիշտ հայցատեսակ մատնանշելու համար, ապա ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականության կատարումը պետք է կատարվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում,

- դատական պրակտիկայում պետք է բացառվի այն իրավիճակը, երբ հայցվորը կրկին ներկայացված հայցադիմումով ընդունում է հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ կատարված մատնանշումը, սակայն դատարանը կրկին ներկայացված հայցադիմումով լրացված փաստերի ու ապացույցների հետազոտման արդյունքում կատարում է մեկ այլ հայցատեսակի մատնանշում՝ կրկին վերադարձնելով հայցադիմումը,

- ճիշտ հայցատեսակի մատնանշումն իր բովանդակությամբ պետք է լինի որոշակի, հստակ ու միանշանակ՝ հիմնված հայցադիմումում ներկայացված փաստերի և կից ապացույցների ամբողջական հետազոտման ու գնահատականի վրա, հայցադիմումը վերադարձնելու որոշումից հայցվորի համար պետք է միանշանակորեն պարզ լինի, թե կոնկրետ ինչ հայցատեսակ է

մատնանշվել, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա հայցադիմումը կրկին ներկայացնելիս իր վարքագիծը համապատասխանեցնել հայցադիմումը վերադարձնելու որոշման պահանջներին (*տե՛ս, Տիգրան Ա6եմյանն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՎԴ/5005/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.12.2023 թվականի որոշումը*)։

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ հայցվորը պահանջում է տրամադրել վարչական մարմնի կողմից օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունելու՝ անգործություն դրսևորելու արդյունքում ընդունված ֆիկտիվ վարչական ակտը՝ հայցի հիմքում փաստարկելով նաև վարչական վարույթի ժամկետի երկարաձգումների ոչ իրավաչափ լինելը՝ պայմանավորված վարչական վարույթի ժամկետները երկարաձգելու մասին հրամանները վարչական վարույթի առավելագույն ժամկետի խախտմամբ ընդունված լինելու հանգամանքով, ապա վարչական վարույթի ժամկետների երկարաձգման հրամաններում առավելագույն ժամկետների պահպանված լինելու, հայցատեսակի պատշաճ լինելու կամ դրա ոչ պատշաճ և փոփոխման ենթակա լինելու մասին եզրահանգում կատարելը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում անհնարին լինելու պարագայում դատարանը պարտավոր է այդ հարցերին անդրադառնալ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործի արդյունավետ քննությունն իրականացնելուն ուղղված գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում կատարվող գործողությունների ժամանակ, որից հետո միայն իրավական գնահատական տալ գործողության կատարման հայցի՝ որպես պատշաճ հայցատեսակ հանդիսանալու և փոփոխման ենթակա լինելու հարցին: Նշված դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ հայցադիմումի ընդունելիության փուլում ճիշտ հայցատեսակի մատնանշումը պետք է կատարվի այդ պարտականությունը կատարելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերի բավարար համակցության ակնհայտ առկայության դեպքում միայն, իսկ ֆիկտիվ վարչական ակտի ընդունված համարվելու նախապայմաններից մեկի՝ օրենքով սահմանված համապատասխան ժամկետի խախտմամբ ընդունված լինելու հարցը հայցադիմումի ընդունելիության փուլում կարող է որոշակի լինել միայն այդ հարցին վերաբերելի փաստական հանգամանքների, մասնավորապես՝ վարչական վարույթի ժամկետների երկարաձգման որոշումներում առավելագույն ժամկետների խախտումների ակնհայտ լինելու դեպքում: Հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում այդօրինակ փաստական հանգամանքների բացակայության պարագայում ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականությունը պետք է կատարվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Ամփոփելով ամբողջ վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ հայցվորը ներկայացնում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայց՝ փաստարկելով, որ ֆիկտիվ վարչական ակտը համարվում է ընդունված, քանի որ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտն ընդունվել է օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, իսկ վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու հրամանները ոչ իրավաչափ են՝ պայմանավորված դրանց ընդունման առավելագույն

ժամկետները խախտված լինելու հանգամանքով, ապա հայցադիմումի ընդունելիության փուլում հայցատեսակի պատշաճ լինելու մասին եզրահանգում անելու համար ՀՀ վարչական դատարանը պետք է իրավական գնահատական տա վարչական վարույթի ժամկետների երկարաձգման հրամաններն օրենքով սահմանված առավելագույն ժամկետների պահպանմամբ կամ խախտումներով ընդունված լինելու հարցին, որի պատասխանով է պայմանավորված լինելու դիմումի հիմքով հարուցված վարչական վարույթն օրենքով սահմանված ժամկետում եզրափակված լինելու կամ չլինելու հանգամանքը: Այլ կերպ ասած, հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի առկայության պայմաններում գործողության կատարման հայցատեսակը պատշաճ է, եթե այդ ակտն ընդունվել է վարչական վարույթի ժամկետի ավարտից հետո, այդ թվում՝ վարչական վարույթի ժամկետների երկարաձգման հրամաններն օրենքով սահմանված առավելագույն ժամկետների խախտմամբ ընդունված լինելու պատճառով: Ընդ որում, հայցադիմումի ընդունելիության փուլում հայցատեսակի պատշաճ լինելու հարցը ՀՀ վարչական դատարանը կարող է պարզել և մատնանշման պարտականությունը կատարել միայն այն դեպքում, երբ ներկայացված փաստական տվյալները բավարար են ճիշտ հայցատեսակի մասին եզրահանգում անելու համար: Հակառակ դեպքում նշված հարցերին անդրադարձ պետք է կատարվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Նախարարությանն Ընկերությանը տրամադրել օրենքի ուժով ընդունված՝ թիվ ԼՎ-425 լեռնահատկացման ակտում փոփոխություն կատարելու՝ լցակույտի տեղադիրքը և դրա կոորդինատները նախատեսելու վերաբերյալ վարչական ակտը:

Դատարանը 11.05.2026 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է այն հիմնավորմամբ, որ *«(…) Հայցվորի 07.01.2025 թվականի դիմումով հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվել է 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանը: Նույն հրամանի ուսումնասիրությունից հետևում է, որ ՀՀ ՏԿԵ նախարարի հրամաններով 07.01.2025 թվականի դիմումով հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է: Այսինքն՝ վարչական մարմնի կողմից օրենքով սահմանված ժամկետում անձի դիմումի նկատմամբ չի ցուցաբերվել անգործություն, այլ կայացվել է 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանը:*

Ինչ վերաբերում է Հայցվորի այն փաստարկին, որ վարույթի ժամկետները երկարաձգվել են օրենքի խախտմամբ՝ (…) նշված փաստարկը կարող է քննարկվել 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանի իրավաչափությունները ստուգելու ժամանակ, մինչդեռ Դատարանը չի կարող վարույթի ժամկետները օրենքի խախտմամբ երկարաձգված լինելու հիմքով արձանագրել, որ վարչական մարմինը օրենքով սահմանված ժամկետում անձի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացրել և հաստատել, որ Հայցվորի և վարչական մարմնի միջև առաջացել է իրավաբանական ֆիկցիայի վերաբերյալ վեճ:

(…)

Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, մասնավորապես՝ ներկայացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածին համապատասխան պարտավորեցման հայց՝ խնդրելով ընդունել թիվ N ԼՎ-425 լեռնահատկացման ակտում փոփոխություն կատարելու՝ լցակույտի տեղադիրքը և դրա կոորդինատները նախատեսելու վերաբերյալ վարչական ակտ, որն իր մեջ կներառի նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքային նախարարությունը 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանը վիճարկելու պահանջը»:

Վերաքննիչ դատարանը 19.06.2026 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժել է և անփոփոխ է թողել Դատարանի 11.05.2026 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը՝ պատճառաբանելով, որ *«(…) 07.01.2025 թվականի դիմումով հարուցված վարչական վարույթի ժամկետը բազմիցս երկարաձգվել է, ինչը նշանակում է, որ գործել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածում նշված բացառությունը՝ դրանով թվարկված հիմքերից մեկով կամ մի քանիսով վարչական վարույթի ժամկետի երկարաձգման դեպքը: Հետևաբար, առկա է եղել պարտավորեցման հայց ներկայացնելու համար նախապայման հանդիսացող բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից մերժելու հանգամանքը հիմնավորող ապացույցը 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանը:*

(…) տվյալ դեպքում հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու համար պատշաճ հայցատեսակ է հանդիսանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված պարտավորեցման հայցը: Ուստի, Դատարանն իրավացիորեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով առաջարկել է ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով, մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածին համապատասխան ներկայացնել պարտավորեցման հայց՝ խնդրելով ընդունել թիվ N ԼՎ-425 լեռնահատկացման ակտում փոփոխություն կատարելու՝ լցակույտի տեղադիրքը և դրա կոորդինատները նախատեսելու վերաբերյալ վարչական ակտ, որն իր մեջ կներառի նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքային նախարարության 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանը վիճարկելու պահանջը»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 07.01.2025 թվականին Նախարարությանն ուղղված դիմումով խնդրել է իրականացնել վարչական վարույթ և ներկայացված կոորդինատները հիմք ընդունելով՝ փոփոխել լեռնահատկացման ակտը և դրանում նախատեսել լցակույտի տեղադիրքը/կոորդինատները:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանով Ընկերության 07.01.2025 թվականի դիմումը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, ի թիվս այլնի, փաստարկելով նաև, որ *«(...) չնայած այն հանգամանքին, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ փոխօգնության կարգով միջոցներ ստանալու հիմքով վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով, սույն դեպքում նշված հիմքով վարույթի ժամկետը երկարաձգվել է ընդհանուր 300 օր ժամկետով։*

Բացի այդ, Նախարարության կողմից վարչական վարույթի ժամկետը բազմիցս երկարաձգվել է նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու հիմքով, (...) թեև նշված հիմքով վարչական վարույթի ժամկետը կարող էր երկարաձգվել մինչև 2 անգամ՝ 10-օրյա ժամկետի պահպանմամբ, այնուամենայնիվ սույն դեպքում նշված հիմքով ժամկետը երկարաձգվել է 7 անգամ՝ 70-օրյա ժամկետով։

(...) փոխօգնության կարգով միջոցներ ձեռք բերելու և լրացուցիչ փաստաթղթեր ու տեղեկություններ ստանալու նպատակով վարչական վարույթի ժամկետն այլևս երկարաձգվել չէր կարող։

(...) վարչական վարույթի հնարավոր առավելագույն ժամկետը լրացել է դեռևս 17.03.2025 թվականին և օրենքով սահմանված ժամկետում դիմումը բավարարվելու կամ մերժելու վերաբերյալ որոշում չի ընդունվել։ (...) Վարչական մարմինը հայցվորի 07.01.2025 թվականի դիմումի վերաբերյալ վերջնական մերժման ակտը կայացրել է միայն 10.02.2026 թվականին, այսինքն՝ վարույթ հարուցելուց ավելի քան 1 տարի անց։ Հետևաբար, եթե վարչական վարույթի օրենքով նախատեսված առավելագույն ժամկետը սպառվել է, ապա օրենքի ուժով արդեն առաջացել էր իրավաբանական ֆիկցիա, և հայցվող վարչական ակտը համարվում է ընդունված։

Այս պայմաններում վարչական մարմինը այլևս իրավասու չէ նույն դիմումի շրջանակներում ընդունելու նոր վարչական ակտ, քանի որ վարչական վարույթն արդեն համարվում էր ավարտված օրենքի ուժով։ Ուստի, ժամկետի ավարտից հետո ընդունված թիվ 228-Ա հրամանը չի կարող համարվել Հայցվորի 07.01.2025 թվականի դիմումի վերաբերյալ վարչական ակտ, քանի որ տվյալ հրամանի ընդունման պահին նշված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթն արդեն իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահնանված կարգով եզրափակված էր օրենքի ուժով ընդունված վարչական ակտով, հետևաբար, թիվ 228-Ա հրամանը չի կարող վերացնել արդեն առաջացած իրավաբանական ֆիկցիան և չի կարող հիմք հանդիսանալ գործողության կատարման հայց չներկայացնելու համար»։

Դատարանը 11.05.2026 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրելով, որ հայցվորի 07.01.2025 թվականի դիմումով հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացվել է 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանը, հաստատված է համարել, որ վարչական մարմնի կողմից օրենքով սահմանված ժամկետում անձի դիմումի նկատմամբ չի ցուցաբերվել անգործություն, այլ կայացվել է նշված հրամանը:

Հատկանշական է, որ անդրադառնալով վարույթի ժամկետներն օրենքի խախտմամբ երկարաձգված լինելու վերաբերյալ հայցվորի փաստարկին՝ Դատարանն արձանագրել է, որ *«նշված փաստարկը կարող է քննարկվել 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանի իրավաչափությունները ստուգելու ժամանակ, մինչդեռ Դատարանը չի կարող վարույթի ժամկետները օրենքի խախտմամբ երկարաձգված լինելու հիմքով արձանագրել, որ վարչական մարմինը օրենքով սահմանված ժամկետում անձի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացրել և հաստատել, որ Հայցվորի և վարչական մարմնի միջև առաջացել է իրավաբանական ֆիկցիայի վերաբերյալ վեճ»:*

Ստացվում է, որ Դատարանը, արձանագրելով, որ հայցադիմումի ընդունելիության փուլում իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու վարչական վարույթի ժամկետների՝ օրենքի խախտմամբ երկարաձգված լինելու հանգամանքը, միևնույն ժամանակ հաստատված է համարել, որ օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից չի դրևորվել անգործություն, այլ ընդունվել է միջամտող վարչական ակտ, ըստ այդմ, որպես ճիշտ հայցատեսակ է դիտարկել ոչ թե գործողության կատարման, այլ պարտավորեցման հայցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև գործի նյութերում բացակայում են վարչական վարույթի ժամկետների երկարաձգման հրամանները, այդուհանդերձ հայցադիմումի հետ միաժամանակ էլեկտրոնային համակարգով ներկայացված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 10.02.2026 թվականի թիվ 228-Ա հրամանում առկա տվյալների համաձայն՝ այդ ժամկետները ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 05.02.2025 թվականի թիվ 186-Ա, 07.03.2025 թվականի թիվ 411-Ա, 17.03.2025 թվականի թիվ 489-Ա, 27.03.2025 թվականի թիվ 564-Ա, 28.04.2025 թվականի թիվ 788-Ա, 12.05.2025 թվականի թիվ 890-Ա, 11.06.2025 թվականի թիվ 1250-Ա, 11.07.2025 թվականի թիվ 1541-Ա, 22.07.2025 թվականի թիվ 1663-Ա, 31.07.2025 թվականի թիվ 1742-Ա, 11.08.2025 թվականի թիվ 1882-Ա, 10.09.2025 թվականի թիվ 2189-Ա, 10.10.2025 թվականի թիվ 2424-Ա, 10.11.2025 թվականի թիվ 3089-Ա, 10.12.2025 թվականի թիվ 3420-Ա հրամաններով երկարաձգվել են:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումում և դրա հետ միաժամանակ էլեկտրոնային համակարգով ներկայացված գրավոր ապացույցներում պարունակվող տեղեկությունները, այդ թվում՝ հայցվորի 07.01.2025 թվականի դիմումով հարուցված վարչական վարույթի ժամկետը 16 անգամ երկարաձգված լինելու մասին, բավարար չէին կարող լինել հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում գործողության կատարման հայցատեսակի պատշաճ կամ ոչ պատշաճ լինելու վերաբերյալ եզրահանգում անելու, ըստ այդմ՝ մատնանշմամբ հայցադիմումը վերադարձնելու համար: Մասնավորապես, Դատարանը նախևառաջ պետք է պարզեր, թե ո՞ր նորմատիվ իրավական ակտով են կարգավորվում Ընկերության դիմումի հիմքով հարուցված վարչական վարույթի առանձնահատկությունները, ի՞նչ ժամկետներ են սահմանված այդ վարույթի համար, արդյո՞ք խնդրո առարկա վարչական վարույթը եզրափակվել է այդ ժամկետի պահպանմամբ, արդյո՞ք վարչական վարույթի ժամկետի երկարաձգումների մասին հրամաններն ընդունվել են վարչական վարույթի ժամկետների երկարաձգման օրենքով սահմանված առավելագույն ժամկետներում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումում և կից ներկայացված ապացույցներում վերոգրյալ հարցերի վերաբերյալ բավարար տվյալներ առկա չեն, ինչը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում անհաղթահարելի խոչընդոտ է հանդիսացել հայցատեսակի պատշաճ կամ ոչ պատշաճ լինելու մասին անսխալ եզրահանգում անելու համար: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Դատարանը պարտավոր էր հայցադիմումն ընդունել վարույթ՝ չսահմանափակելով հայցվորի իրավունքների դատական պաշտպանությունը և վերը նշված հարցերին անդրադառնալ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում կատարվող գործողությունների ժամանակ, որից հետո միայն վերջնական իրավական գնահատական տար գործողության կատարման հայցի պատշաճ հայցատեսակ լինելու կամ չլինելու հարցին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն կոնկրետ դեպքում ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու մատնանշում կատարելու բավարար նախադրյալներ հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում առկա չեն եղել, որպիսի պարագայում հայցադիմումը վերադարձնելն անհամաչափ միջամտություն է հայցվոր ընկերության՝ դատարական պաշտպանության իրավունքին, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.06.2026 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 11.05.2026 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող _____ ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող _____ ***Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ***

_____ ***Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ***

_____ ***Լ. ՀԱԿՈԲՅԱՆ***

_____ ***Ք. ՄԿՈՅԱՆ***